

## Հանդիպում ԱՄՆ դեսպանատան հանրային կապերի վարչության պատասխանատու

### Տիկին Կարին Ռոբլիի հետ

2011թ. հունիսի 6-ին “Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն” հկ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում ԱՄՆ-ի դեսպանատան հանրային կապերի վարչության ղեկավար՝ տիկին Կարին Ռոբլիի և դրամաշնորհների պատասխանատու Լիանա Սահակյանի հետ:

Կազմակերպությունների նախագահները՝ Գայանե Դանիելյանը, Աշխեն Պողոսյանը (Արագածոտնի մարզ), Հասմիկ Պողոսյանը (Արարատ), Փառանձեմ Կարապետյանը (Արմավիր), Ջուլետա Բուրուշյանը (Կոտայք), որոնք համագործակցում են ՔՀԶԿ-ի հետ “Գյուղական համայնքների հզորացում” ծրագրի շրջանակներում, որը գլխավորում է ՔՀԶԿ նախագահ Սվետլանա Ասլանյանը, մասնակցել են հանդիպմանը: Այդ հանդիպմանը մասնակցել է նաև ՔՀԶԿ գործադիր տնօրեն՝ տիկին Անահիտ Աբրահամյանը:



Մասնակիցներից յուրաքանչյուրը խոսեց ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող այն ծրագրերի մասին, որոնք նրանց կազմակերպությունները համատեղ իրականացնում են ՔՀԶԿ-ի հետ, իրենց արդյունավետության և պատասխանատվության մասին: Նրանք նշեցին, որ նոր ՀԿ-ներ են հիմնադրվել Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի, Լոռու և Արագածոտնի մարզերում «Գյուղի կանայք քաղաքացիական հասարակության» (1997-2001) ծրագրի շնորհիվ:



Ակտիվ հասարակական կազմակերպությունների ցանցը ստեղծվել է նշված ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ: Նա շարունակում է աշխատել և ունի զգալի ներդրում ՔՀԶԿ-ի կողմից իրականացվող ծրագրերում: Ակտիվ կանանց համագործակցությունը նպաստում է դրական փորձի տարածմանը և տեղական ՀԿ-ների արդյունավետ գործունեությանը: Ցավոք, ցանցի մասնակիցները ֆինանսական խնդիրների պատճառով հնարավորություն չունեն ավելի հաճախ հանդիպելու, սակայն անկախ այս հանգամանքից համագործակցությունը շարունակվում է համատեղ ծրագրերի միջոցով:

- Գյուղի կանայք քաղակազմական հասարակությունում, 1998-2001
- Երիտասարդ կանանց աջակցության կենտրոններ, 2002-2003
- ՀԿ-ի ֆինանսական կայունություն, 2004-2006
- Կանանց միջազգային օրվա նվիրված շարադրությունների համազգային մրցույթ, սկսած 2004թ.
- Սպիտակ ժապավեն " Ոչ աղքատությանը", 2005
- Հզորացնել կանանց մասնակցությունը խորհրդանական ընտրություննում, 2006-2007
- Հզորացնել գյուղական համայնքները, 2010-2011



ՔՀԶԿ գործադիր տնօրեն՝ տիկին Անահիտ Աբրահամյանը, իր երախտագիտությունը հայտնեց ԱՄՆ-ի դեսպանատանը ֆինանսական աջակցության համար և ներկայացրեց այն աշխատանքները, որոնք իրականացվել էին " Երիտասարդ Կանանց Առաջնորդության ինստիտուտ", Երևանում և 3 մարզում «Աջակցության կենտրոններ»(2002-2003), «Համայնքի զարգացման անցումնային դպրոց» (2004-2005), ծրագրերի շրջանակներում և ներկայացրեց հրատարակված գրքերը և լուսանկարները, փաթեթ, որտեղ ամփոփված էին ՁԼՄ-ներում հրատարակված նյութերը: Անգլերենի իմացությունը եւ համակարգչային հմտությունները, ինչպես նաև անձնական առաջնորդության դասընթացները օժանդակել են շրջանավարտների զբաղվածության ապահովելը: Այս դասընթացները աջակցել էին նաև երիտասարդների միջև մտերմությանը: Մի քանի զույգեր ամուսնացել են: Ընդգծվել է, որ ծրագրի հաջողությունը և կարիքը հաստատում են այն փաստը, որ շրջանավարտների 70-76% -ը ներկայումս աշխատում են: Օրինակ, նրանց 5-8% աշխատում են Արագածոտնի եւ Արմավիրի մարզի որպես պետական գործատուներ:

Հանրապետությունում բոլոր ծրագրերը իրականացվում են Երևանում. ՔՀԶԿ-ի քաղաքականությունը, ուղղված բոլոր մարզերի փոքրիկ քաղաքներին և գյուղերին հատկապես գնահատելի է: Բանախոսները իրենց գոհունակությունն են հայտնել տիկին Կարին Ռոբլիին, եւ հույս են հայտնել, որ կմասնակցեն նաև այլ ծրագրերին, որոնք և պատակ կունենան բարձրացնելու կանանց եւ երիտասարդության դերը քաղաքացիական հասարակությունում և համայնքի զարգացման գործում:

Գայանե Դանիելյան

« Աշտարակի շրջանի կանանց ասոցիացիա» հկ նախագահ